ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

« » _____ 2025թ.
N: 03//06848-2025

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 5-33-66

«Տաթևար» ՍՊԸ -ի տնօրեն

Պարոն Ս. Խաչատրյանին

(գործունեության հասցե ք. Երևան, Ն. Շենգավիթ 12 փ. տ 17/2
Հեռախոս +374 93537273, էլ փոստ Khachatryansargis6@gmail.com)

ՀՀ ՇՄԱ ՄԱԱՊՁԲ-25/49 պայմանագիրը
մասնակի միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Խաչատրյան

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի (այսուհետ՝ Գնորդ) և «Տաթևար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2025 թվականի մարտի 31-ին կնքվել է «ՀՀ ՇՄԱ ՄԱԱՊՁԲ-25/49» ծածկագրով՝ «ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կարիքների համար ՀՀ Շիրակի մարզի համայնքների մանկապարտեզներին թվով 23 հատ սպասք լվացող սարքերի և թվով 19 հատ էլեկտրոնային դաշնամուրների մատակարարման» պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի 1.1 կետի համաձայն Վաճառողը պարտավորվում է Գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 1 և թիվ 2 հավելվածներով սահմանված տեխնիկական բնութագրերով և գնման-վճարման ժամանակացույցերով նախատեսված ապրանքներ:

Հիմք ընդունելով Վաճառողի դիմումը, սույն թվականի ապրիլի 28-ին կողմերի միջև ստորագրված համաձայնագրի համաձայն, պայմանագրի ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով: Նշված ժամանակահատվածում սպասք լվացող սարքերը Վաճառողի կողմից մատակարարվել են:

Համաձայն պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացված զեկուցագրի՝ բազմաթիվ հեռախոսազանգերից հետո, սույն թվականի հունիսի 13-ին, Վաճառողի կողմից գրավոր տեղեկատվություն է ուղարկվել ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ Պայմանագրի չափաբաժին 2-ի՝ էլեկտրոնային դաշնամուրների մատակարարման ուշացումների պատճառների վերաբերյալ: Ըստ ներկայացված տեղեկատվության, բեռը գտնվել է Լարսի անցակետում և մաքսատան խստացված ստուգումների և զննումների պատճառով ապրանքի ներկրումը ձգձգվել է:

Այնուհետ, հիմք ընդունելով Պայմանագրի **2.1.5 և 7-րդ կետերի դրույթները**, հաշվի առնելով սահմանային խստացված ստուգումների և բեռների բաց թողնման ընթացքում առաջացած խնդիրների վերաբերյալ Վաճառողի, ինչպես նաև ներկրումն իրականացնող տրանսպորտային կազմակերպության տնօրենի պարզաբանումները խնդրո առարկա գույքի մատակարարման նոր վերջնաժամկետ է սահմանվել՝ ընթացիկ տարվա **հունիսի 30-ը** ներառյալ:

Հուլիսի 5-ից սկսած Վաճառողի և տրանսպորտային կազմակերպության ղեկավարի կողմից հեռախոսակապի միջոցով տեղեկացվել է, որ առաջացած խնդիրների պատճառով մեքենան Հայաստան մուտք է գործելու ոչ թե Լարսի անցակետով, այլ Մեղրիի, սակայն միչև օրս ապրանքը չի մատակարարվել, իսկ էլեկտրոնային դաշնամուրները տեղափոխող մեքենայի իրական գտնվելու վայրի վերբերյալ չկա հստակ տեղեկատվություն:

Վաճառողը մինչև օրս չի իրականացվել պայմանագրի չափաբաժին 2-ով նախատեսված՝ թվով 19 հատ էլեկտրոնային դաշնամուրների մատակարարումը, ինչի արդյունքում խախտվել է Պայմանագրի 2.4.1 կետը:

Պայմանարի 2.1.7 կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությասն համաձայն Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ խախտվել են ապրանքի մատակարարման ժամկետները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը, կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների թերություններով, կամ պարտավորության բովադակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգիրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ Պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ Պայմանագիրը համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հագամանքը, որ Կատարողը մասնակի խախտել է ստանձնած պարտավորությունը՝ չիրականացնելով Պայմանագրով նախատեսված ապրանքների ամբողջ ծավալով և ժամկետում մատակարարումը, ուստի ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմը՝ հիմք ընդունելով վերոգրյալ իրավական հիմքերը միակողմանի հրաժարվում է 2025 թվականի մարտի 31-ին «Տաթնար» ՍՊԸ-ի հետ կնքված N ՀՀ ՇՄԱ ՄԱԱՊՁԲ -25/49 Պայմանագրից, համարելով այն մասնակի լուծված:

«Գնումների մաին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում՝ **եթե խախտել է Պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթի շրջանակում ստանձնած պարտավորությունը**, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) Պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում՝ որոշումը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, սույն ենթակետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Ընդ որում, եթե՝

-լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին,

-մասնակցի կամ Պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան լիազորված մարմնի կողմից մասնակցին ցուցակում ներառելու համար սահմանված քառասնօրյա ժամկետը լրանալը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում ենք, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ընկերության՝ Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված Պայմանագրի և որակավորման ապահովումները

սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը՝ Վաճառողին սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական հաշվեհամարներին փոխանցելու նպատակով, որից 950000 (ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը որպես պայմանագրի ապահովում, իսկ 1425000 (մեկ միլիոն չորս հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամը որպես որակավորման ապահովում:

Փոխանցումը անհրաժեշտ է կատարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն՝ որակավորման ապահովում հ/հ 900008000664, պայմանագրի ապահովում հ/հ 900005000758):

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն ծանուցմամբ Պատվիրատուն ապահովել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

Восстановимая подпись

X

ԱՐՍԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: ABRAHAMYAN ARSEN 2805670108

Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Կատարող՝ Լ. Մարտիրոսյան

Ֆինանսական վարչություն

*հեռ. (312) 49000*147*